

N 1/26

20.02.2026թ

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

պարոն Հ. Մաթևոսյանին

Հարգելի պարոն նախարար

«ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է ընդերքօգտագործում ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասում:

Հանքավայրի շահագործման բնապահպանական կառավարման պլանին և 2025թ հունվարի 17-ին ստացված ԲՓ 005-25 դրական փորձաքննական եզրակացություն ստացած ՇՄԱԳ հաշվետվության համաձայն՝ աշխատանքների ընթացքում կատարվել են շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ՝ մթնոլորտային օդի, հողային ծածկույթի, մակերևութային ջրի՝ ջրհեռացնող առվի, վերաբերյալ:

Ստորերկրյա ջրերը բացակայում են:

Ստորև ներկայացնում եմ 2025 թվականի ընթացքում ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասում ընկերության պատվերով իրականացված մոնիթորինգի արդյունքները՝ ըստ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման հավելված 2-ով սահմանված ձևաչափի:

տարբերակը՝ էլեկտրոնային :

Հարգանքով՝

<<ԼԵՎՈՒՇ>> ՍՊԸ-ի տնօրեն՝

Հեն՝ 091417873

Հասցե՝ ք, Երևան, Չարենցի 1-ին նրբ, տ. 65

E-mail: levushllc@gmail.com




Ա. Հարությունյան

**ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԱՄՓՈՓ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտար- կումների տեսակը	Հաճախականությունը	Միջինացված արդյունքը <sup>1</sup>
1	2	3	4	5	6
Մթնոլորտային օդ	Հանքավայրի տարածք	Ծծմբի երկօքսիդ Ազոտի երկօքսիդ	Նմուշարկում, նմուշների լաբորատոր վերլուծություն	Աշխատանքների ընթացքում, յուրաքանչյուր շաբաթ	0.004մգ/մ <sup>3</sup> 0,016 մգ/մ <sup>3</sup>
Մակերևութային ջրեր	Ջրհեռացնող առու	Ծավալային գնահատում	Տոսողական	տարեկան երկու անգամ սեզոնային՝ գարնանը և աշնանը	Օիսմ
Ստորգետնյա ջրեր	/ Բացակայում են/				
Հողային ծածկույթ	Հանքավայրի տարածք	Քիմիական կազմ, նավթամթերքն երի պարունակությ ուն	Տարածքի դիտարկում	2025 թվականի ընթացքում մեկ անգամ	Նավթամթերքներ չեն հայտնաբերվել հողի քիմիական կազմում:
Ոչ վտանգավոր թափոններ	Նախատեսված չէ				
Վառելանյութերի պահեստարաններ	Հանքավայրի տարածքում վառելանյութի պահեստարաններ չկան				



<sup>1</sup>Մթնոլորտային օդում անօրգանական փոշու պարունակությունը (միջինացված ցուցանիշը) չի գերազանցում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ համաձայնեցված վնասակար արտանետումների ՍԹԱ նորմատիվների նախագծով սահմանված առավելագույն գումարային կոնցենտրացիաները



1	2	3	4	5	6
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ	Հանքավայրի տարածքում ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ չկան				
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակ	Բոլոր սարքավորումները անցել են տարեկան տեխնիկական ստուգում				

Տեղեկատվությունը ներկայացրեց՝

«ԼԵՎՈՒՇ» ՍՊԸ ՀՀ Կոտայքի մարզի Կամարիսի բազալտների հանքավայրի 2-րդ տեղամասում, հեռ +374 91417873

E-mail: levushllc@gmail.com, ք. Երևան, Զարենցի 1-ին նրբ. տ. 65

Գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հոռախոսը, կայքը, էլեկտրոնային հասցեն՝ առկայության դեպքում

Ղեկավար

*Վ. Խարսյան*

Պաշտոնը, անունը, ազգանունը

*Վ. Խարսյան*  
ստորագրությունը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը



## **Բ Ա Ց Ա Տ Ր Ա Գ Ի Ր**

**Հանքավայրի տեղադիրքը.** Կամարիսի բազալտի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի տարածքում: Առաջին տեղամասը տեղադրված է Կամարիս գյուղից 1.5կմ հարավ, երկրորդ տեղամասը՝ նույն գյուղից 3.6կմ հարավ-արևմուտք: Մոտակա բնակավայրերն են Մայակովսկի-2,4կմ, Ձորաղբյուր-1,67կմ, Արամուս-2,55կմ, Կամարիսից հեռավորությունը կազմում է 3,03կմ: Արվյան քաղաքը 10կմ հեռավորության վրա: 6կմ հեռավորության վրա անցնում է Երևան-Թբիլիսի ավտոմայրուղին, որից բաժանվում է դեպի տարածք գնացող Արվյան-Մայակովսկի ասֆալտապատ ավտոճանապարհը:

### **Երկրաբանական կառուցվածքը.**

Տարածաշրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգենի և չորրորդական ժամանակաշրջանի հրաբխային և նստվածքային ապարներ՝ միջին միոցեն, վերին միոցեն (սարմատ), վերին պլիոցեն և անտրոպոգեն:

Տեկտոնական տեսակետից տարածաշրջանը գտնվում է մերձերևանյան մեգասինկլինորիումի գոտում:

Կամարիսի բազալտի հանքավայրը բաղկացած է երկու տեղամասից N1 և N2, որոնք տեղադրված են մեկը մյուսից 1,5կմ հեռավորության վրա և ունեն միևնույն երկրաբանական կառուցվածքը: Հանքավայրի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են ժամանակակից նստվածքներ, բազալտներ, խարամներ տուֆեր և չորրորդական ժամանակի կավեր:

Երկրաբանական կառուցվածքը վերևից ներքև հետևյալն է.

ա/ **ժամանակակից նստվածքներ**, որոնք ներկայացված են այուվիալ-դեյուվիալ առաջացումներոց և բաղկացած են տարբեր ժայթքումների ապարների կտորներից և զանգվածներից՝ ավազի և խճի շաղախով: Հզորությունը հասնում է մինչև 7մ:

բ/ **Բազալտներ**, որոնք հանդես են գալիս ծածկույթի տեսքով և հանդիսանում են մի շարք հրաբխային կոների էֆֆուզիվ գործունեության արդյունք: Ղրանք ապարներ են, որոնք առաջացել են հրաբխային զանգվածի սառեցման արդյունքում: Վերջիններս խիստ ծակոտկեն մոխրագույն բաց-մոխրագույն ապարներ են:

Մակերևույթային մասում ապարները հողմահարված են, խիստ ճաքճքված և ջարդոտված: Ըստ խորության շարունակվում է ճաքճքվածությունը և բազալտի զանգվածը

բաժանում է առանձին մեծաբեկորների: Հողմնահարված գոտում առաջացած ճեղքերի չափը տեղ-տեղ հասնում է մինչև 10սմ, որը լցված է կավով:

Բազալտների հզորությունը տատանվում է 3-21ճ-ի սահմաններում: Տարածման մակերեսները կազմում են I-ին տեղամասի համար 52604մ<sup>2</sup>, իսկ II-րդ տեղամասի համար 381390մ<sup>2</sup>:

զ/ Հրաբխային խարամներ, որոնք դուրս չեն գալիս երկրի մակերևույթ, սակայն ունեն լայն տարածում /I-ին տեղամաս/: Հզորությունը տատանվում է 10-25մ սահմաններում և ծածկված են բերվածքային ապարներով մինչև 5-6մ հզորությամբ:

դ/ Կավեր, որոնք տեղադրված են բազալտների տակ և ունեն 3-4մ և ավելի հզորություն:

Բազալտների ֆիզիկա-մեխանիկական հատկությունները բերվում են ստորև:

### I տեղամաս

- ծավալային զանգվածը 2113-2704 միջինը 2310կգ/մ<sup>3</sup>;
- տեսակարար զանգվածը 2,78-2,98գ/սմ<sup>3</sup> միջինը 2,80գ/սմ<sup>3</sup>;
- ծակոտկենությունը - 5,5-27,92% միջինը 11.08%;
- ջրակլանելիությունը - 0,88-4,63%, միջինը 2,79%;
- ցրտադիմացկունությունը - 25;
- փափկեցման գործակիցը – 0.7 – 0.98, միջինը 0,76
- ամրության սահմանը չոր վիճակում 300-1068կգ/սմ<sup>2</sup>, միջինը 632կգ/սմ<sup>2</sup>;
- ամրությանը սահմանը ջրի ազդեցությամբ վիճակում 248-1068կգ/սմ<sup>2</sup>, միջինը 452կգ/սմ<sup>2</sup>;
- ամրությանը սահմանը 25 փուլ սառեցում և հալեցումից հետո 246-652կգ/սմ<sup>2</sup>, միջինը 423կգ/սմ<sup>2</sup>;

### II տեղամաս

- ծավալային զանգված - 2108-2609կգ/մ<sup>3</sup> միջինը 2329կգ/մ<sup>3</sup>;
- տեսակարար զանգված - 2,79-2,90գ/սմ<sup>3</sup> միջինը 2,86գ/սմ<sup>3</sup>;
- ծակոտկենությունը 9,68-28,26% միջինը 18,1%:

- ջրակլանելիությունը 1,6-4,16%, միջինը 2,75%;
- ցրտադիմացկունությունը - 25;
- ամրության սահմանը չոր վիճակում 300-1036կգ/սմ<sup>2</sup>, միջինը 631կգ/սմ<sup>2</sup>;
- ամրությունը սահմանը ջրի ազդեցած վիճակում 238-419կգ/սմ<sup>2</sup>, միջինը 477կգ/սմ<sup>2</sup>;
- ամրությանը սահմանը 25 փուլ սառեցում և հալեցումից հետո 132-740 կգ/սմ<sup>2</sup>, միջինը 321կգ/սմ<sup>2</sup>;
- քերամաշեղիությունը – 0.17գ/սմ<sup>2</sup>:

Բազալտների քիմիական կազմը II-րդ տեղամասի համար հետևյալն է

SiO <sub>2</sub>	Fe <sub>2</sub> O <sub>3</sub>	TiO <sub>2</sub>	Al <sub>2</sub> O <sub>3</sub>	CaO	MgO	K <sub>2</sub> O+ Na <sub>2</sub> O	SO <sub>3</sub>	խոնավ	կշժ
48,74%	13%	1,41%	18,47%	8,7%	6,41%	4,35%	հոք	0.14	0.24

**Հաստատված պաշարները.**

Հանքավայրի պաշարների հաշվարկը կատարվել է երկրաբանական բլոկների մեթոդով:  
Բազալտի պաշարների ամփոփիչ հաշվարկը բերված է աղյուսակում:

N	Պաշարների կարգը	Երկրաբանական բլոկի հիմքի մակերեսը մ <sup>2</sup>	Մակաբացման ապարների միջին հզորությունը, մ	Հանքամարմնի միջին հզորությունը, մ	Մակաբացման ապարների ծավալը, հազ.մ <sup>3</sup>	Օգտակար հանածոյի ծավալը, հազ.մ <sup>3</sup>	Մակաբացման գործակիցը
<b>I տեղամաս</b>							
1.	A	7620	1,5	17,37	11430	132359	1:11,5
2.	B	44984	2,6	15,7	116958	706249	1:6,4
3.	A+B	52604	2,44	16,0	128388	838608	1:6,52
<b>II տեղամաս</b>							
1.	A	34400	2,42	7,77	83248	267288	1:3,21
2.	B	96000	2,34	7,66	224640	735360	1:3,27

3.	B	35200	1,87	4,6	65824	161920	1:2,46
4.	C <sub>1</sub>	215790	2,25	7,30	485527	1575267	1:3,24
5.	A+B	165600	2,31	7,05	373712	1164368	1:3,1
6.	A+B+ C <sub>1</sub>	381390	2,25	7,1	859239	2739835	1:3,18

Աղյուսակից երևում է, որ բազալտի օգտակար շերտի հզորությունը կազմում է I տեղամասի համար 16,0մ, մակաբացման ապարների հզորությունը 2,44մ, իսկ II տեղամաս համար համապատասխանաբար 7,1 և 2,25մ:

Կամարիսի հանքավայրի բազալտների պաշարներն A+B+C<sub>1</sub> կարգերով 357.9 հազ.մ<sup>3</sup> քանակով հաստատվել են ՀՍՍՀ ՊՏՀ-ի 29.06.1982թ. N 260 արձանագրությամբ:

1-ին տեղամաս 839.6հազ.մ<sup>3</sup>, այդ թվում A – 132.8; B – 706.8:

2-րդ տեղամաս 2739,8հազ.մ<sup>3</sup>, այդ թվում A – 267,3; B – 897,2; C<sub>1</sub> – 1575,3:

Պաշարները հաստատված են ՀՍՍՀ 1102-79 Պատքար տուֆերից, բազալտներից և տրավերտիններից ստանդարտներին համապատասխան շինաքար ստանալու համար, իսկ դրանց արդյունքում առաջացող թափոնները շինարարական խճի (ՀՍՍՀ ԳՈՍՍ 8267-95 խիճ բնական քարերից շինարարական աշխատանքների համար) արտադրության համար: Շինաքարի ելքը համաձայն պաշարների պետական հաշվեկշռի կազմում է 19,5%:

***Հանքավայրի շահագործման լեռնատեխնիկական պայմանները.***

Ելնելով հանքավայրի տեղադիրքից, հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, տեղամասի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, որը ներկայումս իրականացվում է Ընկերության կողմից: Հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել մեխանիկական եղանակով՝ էքսկավատորի հենքի վրա տեղադրված հիդրավլիկ մուրճով: Արդյունահանման աշխատանքներն իրականացվելու են 1-A, 2-B և 4- C<sub>1</sub> կարգի բլոկների սահմաններում:

Հանքավայրի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողմանի խորացմամբ մշակման համակարգ, մակաբացման ապարների արտաքին ժամանակավոր լցակույտերի տեղափոխումով տեղադրված նախագծվող բացահանքի սահմաններում, ինչպես նաև

բացահանքի արևելյան մասում ընկերությանը լեռնահատկացման ակտով տրամադրված տարածքում:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը՝

- Ամենամեծ երկարությունը – 500մ
- Ամենամեծ լայնությունը – 495մ
- Բացահանքի առավելագույն խորությունը – 45.0մ
- Մակաբացման ապարների հզորությունը – 0.5-5մ:
- Օգտակար հանածոյի հզորությունը – 3-7մ
- Օգտակար հանածոյի մարվող հաշվեկշռային պաշարներն ըստ A+B+C<sub>1</sub> կարգի՝ - 983764մ<sup>3</sup>, այդ թվում՝ A – 71153, B – 416134, C<sub>1</sub> – 496477մ<sup>3</sup>:

- Արդյունահանվող պաշարների քանակը՝ – 864729մ<sup>3</sup>
- Մակաբացման ապարների քանակը – 354254մ<sup>3</sup>, այդ թվում նախկինում արդյունահանված և ներկայումս գոյություն ունեցող բացահանքի հյուսիսային մասում կուտակված – 51462մ<sup>3</sup>:

Հողաբոսական շերտը բացակայում է:

- Բացահանքի օտարման մակերեսը – 15հա:

Բուլդոզերային աշխատանքները բացահանքի պայմաններում կայանում է՝ բացահանքի տարածքներում մակաբացման և հիմնատակող ապարների տեղափոխումը և կուտակումը, ջարդքարի տեղափոխումը /խճի հումք/ և կուտակումը, ինչպես նաև լցակույտերում ապարների տեղափոխումը և մակերևույթների հարթեցումը:

Լցակույտ առաջացնող ապարներն են հանդիսանում մակաբացման ապարները 302792մ<sup>3</sup>, հիմնատակող ապարները 83272մ<sup>3</sup> և նախկինում արդյունահանված մակաբացման ապարները 51462մ<sup>3</sup>՝ ընդամենը 437526մ<sup>3</sup>, որոնք տեղադրվում են ինչպես արտաքին այնպես էլ ներքին լցակույտերում:

Կամարիսի բազալտների հաստատված պաշարների եզրագծի սահմաններում, հետախուզական աշխատանքների ընթացքում, գրունտային ջրեր չեն հայտնաբերվել: Հանքամարմինը կազմավորող ապարները ծակոտկեն են և ջրակլանող: Մթնոլորտային ջրերը ներծծվելով ապարների միջով հասնում են մինչև ջրամերժ շերտը բացարձակապես մեծ խորությունների վրա: Հետևաբար հանքավայրի հիդրոերկրաբանական պայմանները բարենպաստ են այն շահագործելու համար:

**Շրջակա միջավայրի հակիրճ նկարագիրը.**

Կամարիսի բազալտի հանքավայրը վարչական տեսակետից գտնվում է Կոտայքի մարզի տարածքում: Առաջին տեղամասը տեղադրված է Կամարիս գյուղից 1.5կմ հարավ, երկրորդ տեղամասը՝ նույն գյուղից 3.6կմ հարավ-արևմուտք: Մոտակա բնակավայրերն են Մայակովսկի-2,4կմ, Ձորաղբյուր-1,67կմ, Արամուս-2,55կմ, Կամարիսից հեռավորությունը կազմում է 3,03կմ: Արվյան քաղաքը 10կմ հեռավորության վրա: 6կմ հեռավորության վրա անցնում է Երևան-Թբիլիսի ավտոմայրուղին, որից բաժանվում է դեպի տարածք գնացող Արվյան-Մայակովսկի ասֆալտապատ ավտոճանապարհը:

Աշխարհագրական կոորդինատներն են 40°13'38" և 44°39'03"

Հայցվող տարածքի հեռավորությունը Մայակովսկի-Ձորաղբյուր ճանապարհից կազմում է 0,8կմ:

Տարածքի գլխավոր ջրային արտերիան հանդիսանում է Հրազդան գետը:

Քանաքեռի բարձրավանդակի հյուսիս-արևմտյան մասում, անմիջական Հաղիս լեռան ստորոտում, տեղադրված է 20կմ<sup>2</sup> մակերեսով հարթավայրը, որի բացարձակ բարձունքային նիշերն են 1400-2000մ:

Հանքավայրի տարածքն աղքատ է բուսականությունից, անտառներ չկան: Կլիմայական տեսակետից տարածքը պատկանում է լեռնա-կոնտինենտալ դասին: Ձմռանը ջերմաստիճանը հասնում է -25-30°C-ի, իսկ ամռանը մինչև +30°C:

Մթնոլորտային տեղումների քանակը հասնում է 400-500մմ:

Շրջանն ապահովված է էլեկտրաէներգիայով:

Կոտայքի մարզը հանրապետությունում հանդիսանում է որպես խոշոր արդյունաբերական շրջան:

Բնակչությունը հիմնականում հայեր են, որոնց հիմնական զբաղմունքը հողագործությունն է և տարբեր արդյունաբերական ճյուղերը:

Տարածաշրջանը հայտնի է մի շարք շինանյութերի (տուֆ, բազալտ, պեմզա, ավազ և այլն) հանքավայրերով: Դրանցից են Արամուսի բազալտի հանքավայրը, Գյամրեզի

անդեգիտարագալտի հանքավայրը, Արզնու բազալտները, Առինջի հրաբխային խարամները, Տրաբերի լիթոիդային պեմզաները, Անտառամուտի, Քարաշամբի բազալտների հանքավայրերը:

Կամարիսի բազալտների 1-ին տեղամասը հանքավայրի 2-րդ հայցվող տարածքից գտնվում է 4,7կմ արևելք:

Հանքավայրի լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են բաց եղանակով մեքենայացված մշակման համար:

Հանքավայրի շրջանում երկրաշարժերի հնարավոր ուժգնությունը կազմում է 8-9բալ, իսկ առավելագույն հորիզոնական արագացումը՝ 0,3g:

Տարածքի խոշորագույն ջրային երակը Հրազդան գետն է, որը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն:

Կամարիսի բազալտի հանքավայրի շրջանում զարգացած են լեռնաշագանակագույն հողերը:

Հողաշերտի /բուսաշերտի/ հզորությունը միջին հաշվով տատանվում է մոտ 20սմ-ի սահմաններում:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին:

Շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային գոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները:

Նկարագրվող տարածքում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Այս լանդշաֆտային գոնայում տարածված են 113 տեսակ ողնաշարավոր կենդանիներ: Կաթնասունները առավել կերպով ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ:

Թռչունները ներկայացված են բաց տարածքներին բնորոշ տեսակներով: Սողունները և երկկենցաղները փոքրաքանակ են: Գարնան և աշնան սեզոններին այստեղ հանդիպում են բազմաթիվ չվանցող տեսակներ: Բուն հանքավայրի տարածքում հողաբուսական շերտ չկա:

Մակարացման ապարները ներկայացված են տարբեր ժայթքումների ապարների կտորներից և գանգվածներից ավազի և խճի շաղախով, որի հզորությունը հանքավայրի սահմաններում հասնում է մինչև 7մ (նկար 8):

Հանքավայրի տարածքում չեն արձանագրվել նաև կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր: Համատարած բուսական ծածկույթը նույնպես բացակայում է:

Բուն հանքավայրի տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Այստեղ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

Կամարիսի բազալտի հանքավայրի 2-րդ տեղամասի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Տեղամասի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում:

**Բնապահպանական միջոցառումների բնութագիր.** Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

Մթնոլորտային օդի պահպանության միջոցառումներ.

- լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը;
- լեռնային տեխնիկայի և ավտոինքնաթափերի շարժիչների գազերի արտանետման վրա տեղադրված են կատալիտիկ չեզոքացուցիչներ, ինչը թույլ է տալիս կրճատել գազերի արտանետումները մթնոլորտ;
- տաք և չոր եղանակին բեռնվող լեռնազանգվածը, արտադրական հրապարակը, մերձատար ճանապարհները ջրցանվում են, ինչը թույլ է տալիս կրճատել փոշու արտանետումները,
- ներհանքային ճանապարհների բարեկարգման ուղղությունների և մեթոդների կիրառելիության ուսումնասիրություն՝ իմաստատում

մակարացման ջերտի սպարներով, ինչը թույլ կտա կրճատել փոշեզոլայացման ծավալները:

- լցակույտի մակերեսների, խախտված տարածքների ընթացիկ ռեկուլտիվացիա, ինչը կկրճատի լցակույտի մակերեսից փոշու բնական տարուքի ծավալները:
- մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի, ջրհեռացնող առվի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում:
- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,
- հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն,
- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,
  - արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում,
  - դիզելային շարժիչով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների տեղադրում,
  - կեղտաջրերի հավաքում հորաստիպ գուգարանում, որը հետագայում դատարկում են հատուկ ծառայության ուժերով,
  - խախտված տարածքների ռեկուլտիվացիա, որի նպատակով կատարվում են հատկացումներ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին: